

## ՄԻ ԱՍՏԻՊ ՏԱՂ ԽԵՒ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑՈՒՑ

Սոյն յօդուածի խնդրոյ առարկան Մաշտոցեան մատենադարսանի թիւ 2676 ձեռագրում պահպանուած Յովհաննէս Թլկուրանցու տաղն է: Յօդուածի նպատակն է հրապարակել մինչեւ այժմ անտիպ մ՞նացած տաղը: Յօդուածի արդիականութիւնը թլկուրանցիագիտութիւնը նոր տաղով հարստացնելը, տաղի բը-նագիրը կազմելն ու գիտական շրջանառութեան մէջ դնելն է: Յօդուածում կիրառել ենք մեկնողական մասնագիտական գործելառնը՝ ձեռագրագիտական եւ բնագրագիտական սկզբունքների համարմամբ: Յօդուածի գիտական նորոյթը Յովհաննէս Թլկուրանցու անտիպ տաղի գիտական բնագրի հրապարակումն ու մեկնաբանումն է:

## ՏԱՐԻ ԲՆԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՈՒՄ

Տաղը պահպանուել է Մաշտոցեան մատենադարանի հմր. 2676 ձեռագրի 210ա-210բ թերթերում, իսկ աւարտը 188ա թերթում է<sup>1</sup>: Այն ժարի գրչութեամբ ձեռագիր է, ունի երկու գրիչ՝ Աստուածատուր երէց, որ գրչագրել է ձեռագրի 1-210 թերթերը, եւ Անանուն գրիչ, որ գրչագրել է 211-221 թերթերը: Ձեռագրի ստացողն է Աստուածատուր Կողա Բասենցին: Մեզ հետաքրքր այս տաղի գրչագրող Աստուածատուր գրիչն է: Զետաքրքրող այս տաղի գրչագրող Աստուածատուր գրիչն է: Զետաքրքրող նորոգուած է, ինչի հետեւանքով թերթերը ետեւառաջ ուագիրը նորոգուած է, ինչի հետեւանքով թերթերը ետեւառաջ են, կան նաեւ ընկած թերթեր. այն դեղնաւուն թղթից է, գրու-

<sup>1</sup> Այս մասին տե՛ս՝ Մայր ցուցակ հայերէն ժեռագրաց Մաշտոցի ամուամ մատենադարսթի, Ը., Երևան 2013, 1105, Բակու՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԸԼ-ԿՈՒՐԱՆՑԻ, Տաղեր, ՊԻՎԱԶԵՆՆ, Է. (աշխ.), Երևան 1960, 80-81:

թիւնը՝ երկարւն: 210ա թերթի առաջին սեան մէջ թորոս անունով երգչի տաղն է, որին նոյն սիւնակի ստորին մասում յաջորդում է թլկուրանցու այս անտիպ մնացած տաղը: Այն խորագրուած է՝ «Տաղ Թլգուրանցի ասացեալ է», ապա յաջորդում է դարչնագոյն Գմեծատառ զարդագիր թռչնագիրը, որին հանդիպագիր կարմիր, կանաչ, կարմիր յաջորդականութեամբ սկսուող տաղի սկսուածքն է, ապա յաջորդիւ տաղի սեւ նոտրգիր գրչութիւնը:

**Ձեռագրում տաղի ամէն մի տունն սկսում է կարմիր գըլ-խատառով:** Տեղ-տեղ սեւ նոտրգիրը ընդմիջում է կարմիր, կանաչ, կարմիր նոտրգիր գրչութեամբ: 210բ թերթն աւարտում է տաղի 39րդ տողով («Դեւքն ի զամէն տանի հուն, նոքա հակառակ են քեր»), որի վերջին վանկն անցել է յաջորդ թերթին. այն ձեռագրում ետեւառաջութեան պատճառով տեղափոխուել է 188ա թերթ («ուն, իմ տեր, սաստէ նոցա դասուն, որ փախիցեն ի քրիստոնուն»), իսկ ձեռագրի յաջորդ 211ա թերթում թլկուրանցու «Տաղ արարածոց»ն է:

**Ձեռագիրը գրչագրուել է ԺԶ. դարում՝ թլկուրանցու ապրած ժամանակից երկու դար յետոյ, իսկ ձեռագրի գրիչ Աստուածատուր երէցը ճշգրիտ չի արտագրել տաղը մեզ չհասած նախագաղափար օրինակից, եւ այն ունի բազմաթիւ աղաւաղուած բառեր, ուստի քննական բնագիրը կազմելիս կատարել ենք որոշ ուղղումներ ու սրբագրումներ՝ այդ մասին կատարելով համապատասխան նշումներ: Ձեռագրում տաղը խորագրուած է թլկուրանցու անունով, իսկ վերջում բանաստեղծը, որպէս անհատականութեան գիտակցման դրսեւորում, յիշատակում է իր անունը՝ Խեւ Յովհաննես Թլկուրանցի ձեւով, ինչը, անտարակոյս, հաստատում է տաղի հեղինակային պատկանելութիւնը:**

Արդ, ձեռագրի 210ա-210բ եւ 188ա թերթերից օգտուելով, կազմել ենք տաղի ամբողջական քննական բնագիրը, թէեւ այն ձեռագրում ունի որոշ աղաւաղումներ եւ մի անընթեռնելի բառ: Քանի որ տաղը մեզ հասել է միակ ձեռագրով, որում կան բազմաթիւ աղաւաղուած բառեր, ուստի բնագիրը կազմելիս կատարել ենք որոշ ուղղումներ եւ սրբագրումներ՝ այդ մասին նշելով տողատակում:

## ՏԱՂ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ ԱՍԱՑԵԱԼ է

Գերի, քանի կենաս ի յերերուն, յունին չոր յիրիկուն.  
Զաւրն բուս զբարախ մարմինդ, ստեղծողին ինչ տաս  
պատասխան<sup>2</sup>:

Զերքաս ընկնես ի հետ գինոյն, կանուշանաս հետ հարիֆնուն.  
Յէն քաղցրաձայն գաւսանուն զմիտքդ տանին հետ լկտանուն:

5 Զինելքդ տանին, զուշքն եւ ցրուին, հետ Աստուծոյ ով կելնէ ի հուն,  
Երքաս ընկնես զազիր ու պեղծ, զգլուխ դնես վերայ շիշերուն:

Միտքդ ի վեր գայ ի հետ գինուն, զբերանդ լիզել տաս շներուն,  
Ասես՝ քարի՛ եկիր, եղրայր, է հարկեւոր մարդ գիտուն:

Մարդ չէ արեխ հետ սիրելուն, ւոչ սանամէր հետ քաւրբնուն,  
10 էն արեր դաստ ըմպով զբերանդ սրբես դու զխարբածնուն:

Գերի տեսեր, չաւգուտ է քեզ, զիոգիդ կանես դու գեհենուդ.  
Յանկարծ տիպայ մահն ու պատմէ, զինզ պատրաստէ՛ քո  
Աստուծուն:

Զինչ յե՞րը տի գաս յորդ որ ի շուռ՝ զիոգիս տւած աւրմիտ անուն,  
Մարմինդ մնայ թափուր ի վայր, զաւրն վայ տաս քո լինելուն:

15 Զուշտ ի վերայ թերւ ւիմացիր, խորի՛, թէ ինչ տելնես ի հուն,  
Մինչ աչքդ է բաց քեզ նա՛ր արայ, չընկնես ի ճեռն անքուն որդոյն:

Հետ լըկանացդ ի շուր կու գաս, վաղուենէն ինչ իրիկուն  
Մէկին հազար հաշիւ կուզեն, քանի ուտես մարդոյ արիւն:

Հաշիւ կուզէ մեծ թագաւորի՛ զչարն ու զբարին յամէն մարդոյ,  
20 Զանայ, որ արժան լինիս, հանգիս ի գոզն Արքահամու:

անացել<sup>3</sup> ունկն է քեզ պատել, ընկնիս ի ճեռն անքուն որդանց,  
Զասմանեն ասեն զանքուն որդոյն, նոր կենան մէջն ի ծովուն:

2 Բնագրում՝ պատասխան, յանգի պահանջով գուցէ պէտք լինի դարձնել պացիութ, որ միջին հայերէնում հենց պատասխան է նշանակում:

3 Առաջին տառը, որ գլխագիր է եղել, անընթեռնելի է:

Յորժամ տեսնուն զմեղաւորն, նայ գոչելով զյառշևն առնուն,  
էն անքուն որդն ի դէմ կելնէ, չար ու անդարձ մեղաւորնուն:

25 Դու ես ծընօղ ւես յիշատակ, արեկ երթանք ի մէջ հիուն,  
Ո՛չ քեզ հուն կայ, ուշ խլըսիս, ուշ ազատիլ ի գեհենուն:

Զաւրն անդադար տաքնապ լիճիս ու տապակիս ի մէջ նոցա,  
Դու աղաչ զկուսն Մարիամ. նշան ուներ յիշն իւր որդուն:

Նշան առեր զկենդանագիրն, զինչ որ ծնունդ աւագանին,  
30 Երթայ ի հետ մարգարէից՝ փառաբանիչք Աստուած Որդոյն:

Անմեղուցեալ ով կայ յաշխարհ, չյուսահատիք ձեր Աստծոյն,  
Ով մեղուցեալ ասէ մեղաց ազատ լիճի ի գեհենուն:

Շուռ գալ ու քաւել պիտէր, զէն հագիմն, որ ինքն է գիտուն,  
Ցուցոյ զբու սրտիդ խոցերն, զդեղն դնէ ի վերայ խոցուն:

35 Հեթիմն երբ նարտար լիճի, դեղ դնէ ու տանէ ի հուն,  
Մլհամ դնէ ցեղք ու ցեղաց, զմարդ հասուցէ իւր մուրատին:

Մեծ բարէխաւս Աստուածածին, բարեխաւսեայ ինքն իւր Որդոյն,  
Միածին քաղցր ու բարի, դու ողորմեայ քո ծառանուն:

Դեւքն բազում են ւանիհուն, նոքա հակառակ են քո գերուն,  
40 իմ տէր, սաստէ՛ նոցա դասուն, որ փախիցն ի քրիստոնուն:

Զօրացն՝ զազգս քրիստոնուն, բարձրացն՝ զեղչիւր եկեղեցուն,  
Մեւնայ երեսն Սադայէլին, մեծ գոհութիւն իմ Աստուծուն:

Խեւ Յովանէս Թղգուրանցի, լալով ասաց իւր հրեշտակին,  
Զիս պահեցէ՛ այսոց չարեաց, որ չի հեռնամ իմ Աստուծուն:

45 Տէրըն զբայ ի մեզ, մանկո՛ւնք, զինչ որ զըբաց քանանացուն,  
Թռողու ըզմեղքն, հաւսար տանի ի իւր դասըն հըրեշտակնուն:

## ԶԵՌԱԳԻՐ

A - ձեռ. հմք. 2676, թերթ 210ա-210ի, 188ա:

## ԽՈՐԱԳԻՐ

Ա Տաղ Թլկուրանցի ասացեալ է

## ԲՆԱԳԻՐ

- 1 A յութին չոր փխ յառավօտուն չուր
- 10 A զիսարբածնու
- 17 A ի շուր փխ ի շուր A ինչ փխ մինչ
- 21 A անընթեռնելի է
- 22 A ի մեջն փխ մեջն
- 25 A հեռւն փխ ի հուն
- 26 A ազատիլ
- 27 A տակապես
- 33 A հագիւմն փխ հեթիւմն
- 36 A մուրատին
- 38 A ողորմեայ
- 41 A Զաւրացոյ A բարձրացոյն փխ բարձրացոն
- 44 A հեռանամ
- 45 A գրած փխ գըրաց
- 46 A դասնն

## ՏԱՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ

Եթէ Թլկուրանցին իր սիրերգերով «մարմնապէս ծիծաղում է», ապա իր խրատական տաղերով ասես «Հեծում է հոգեպէս»։ Նա որքան ազատ ու անկաշկանդ է իբրեւ սիրոյ երգիչ, նոյնքան զուսպ է ու չափաւոր խրատական տաղերում։ Բանաստեղծը խըրատում է հեռու մնալ արբեցութիւնից, չար գործերից, աշխարհի մեղքերից։

Թլկուրանցու խոհախրատական բոլոր տաղերը՝ խրատները, պարսաւները, ինքնապարսաւները, անշուշտ, ունեն բացառապէս խրատելու նպատակ։ Խրատական տաղերում Թլկուրանցին հանդէս է գալիս իբրեւ աշխարհաճանաչ ու աշխարհատես մի բանաստեղծ, բարի գործի նախանձախնդիր։ Բարի գործելը աստուածային մի պատուիրան է, որ տարբեր ձեւերով հնչում է Թլկուրանցու խօսքերում։

Թլկուրանցու պարսաւները յաճախ դառնում են ինքնապարսաւներ, եւ բանաստեղծը, խոստովանելով իր մեղքերը, կատարեալի տեսլականով գանգատուում է իր եւ միջավայրի անկատարութիւնից։

Խրատական բովանդակութեամբ այս անտիպ տաղը հաւատարիմ է մնում Թլկուրանցու խոհախրատական տաղերի ոգուն։

Բանաստեղծն այս տաղում ընտրել է հետաքրքիր դիմումնային ձեւ։ Դիմելով իր գերի անձին, որ առաւօտից մինչեւ իրիկուն մարմնական վայելքներով է տարուած, զգուշացնում է, որ դրա համար պիտի պատասխան տայ Ստեղծողին։

Գինին ու գուսանը հանդէս են գալիս տաղում որպէս աշխարհիկ վայելքների խորհրդանիշներ, որոնք մարդու խելքը գլխից տանում են այնպէս, որ

Երբաս ընկնիս զագիր ու պեղծ, զգըլուխ դնես վերայ շիշերուն։

Միտքդ ի վեր գայ ի հետ գինուն, զբերանդ լիզել տաս շըներուն։

Ինչպէս իր քերթուածներում առհասարակ, այս տաղում եւս, զգալով, որ մեղքերն օրէցօր աւելանում են, սթափեցնող մի ճիչով նա սարսափահար աղաղակում է մահուան մասին, որն ամենամեծ խրատողն է։

Թլկուրանցին գեհենի սարսափով զգուշացնում է, որ աշխարհիկ վայելքներով կեանքը շարունակելու դէպքում «ընկնիս ի ձեռն անբուն որդանց»։

**Իբրեւ հաւատաւոր մարդ՝ Թլկուրանցին իր յոյսը կապում է մեղքերի թողութեան հետ.**

Ծուռ գալ ու քաւել պիտեր, զեն հագիւմն, որ ինքն է գիտուն, Յուցոյ լզքոյ սըրտիդ խոցերն, զդեղ դնէ ի վերայ խոցուն:

**Իսկ ճարտար «հեթիմ»-քժիշկը կարող է տեսակ-տեսակ «ցեղք ու ցեղաց» «մըլհամ»-դեղ դնել սրտի խոցերին այնպէս, որ մարդ հասնի իր «մուրազ»ին՝ փրկութեանը:**

**Մինչդեռ դեւերի դասը հակառակ է քրիստոնէական իր այս պատուիրաններին ու փրկութեան յոյսերին:**

**Թլկուրանցին այս տաղում եւս օգտուել է ժողովրդական հաւատալիքներից, ինչպէս առհասարակ իր քնարերգութեան մէջ:** Տաղում յիշատակւում է «այսոց չարեաց» արտայայտութիւնը, որ չար ոգու՝ Դեւի անուանում է, ինչից պիտի իրեն փրկի իր հրեշտակը: Յիշատակուած Այսը չար ոյժ է, ինչի մասին գրել է Հ. Ղեւոնդ Ալիշանը: «Այս, որ է օդեղին կամ հովու Դեւ»<sup>4</sup>:

**Ուրեմն չար հողմն անուանուել է Այս, որից զարկուողը՝ այսահար, ինչը նոյն դիւահարն է:**

**Ուշագրաւ է, որ բացի այս Այսից՝ Թլկուրանցու այլ տաղերում հանդիպում է նաև Արեւորդու մասին վկայութիւն, որ հին հայոց հաւատի արտայայտութիւն է, ինչը նկատել է դեռեւս Ալիշանը<sup>5</sup>:**

Կինն չգանի Արեւորդւոյ,  
Ոչ ի Զիտէ, ոչ ի Թուրքէ,  
Զով որ սիրէ, հաւատն այն է.  
Աստուած, փրկէ՛ կնկան շառէ:<sup>6</sup>

**Յաւելենք, որ Թլկուրանցին իր տաղերում յիշատակում է այլ հնագոյն հաւատալիքներ, այդ թւում՝ Զար ոգիներից, Նեռի, Սաղայէլի, Սատանայի, Դեւի անունները եւ այլն:**

Նեռ սոյն սիրովն բորբոքին այս հողածին մարդիքս չար.<sup>7</sup>

<sup>4</sup> ԱԼԻՇԱՆ, Հ. Դ., Հիմ հաւատք կամ հեքամոսակամ կրօմք հայոց, Վենետիկ 1895, 213:

<sup>5</sup> Անդ, 93, 213:

<sup>6</sup> ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ, Տաղեր եւ գանձեր, Եղիսաբետան, Վ. (աշխ.), Վանաձոր 2004, 50:

<sup>7</sup> Անդ, 26:

«Գեհեն»-Դժոխքի հաւատալիքը Թլկուրանցու տաղերում յաճախաղէպէ է, ինչն այս տաղում եւս ընդգծուած արտայայտուել է.

Գերի տեսեր, չաւգուտ է ֆեզ, զիոգիդ կանես դու գեհենուդ.

Ի վերջոյ, Թլկուրանցին ապաւինում է իր բարի հրեշտակին՝ յուսալով, որ նա իրեն արժանի կանի հրեշտակների պահպանութեանը չարից՝ նաեւ այս տաղի չնորհիւ.

Խեւ Յովանէս Թլգուրանցի, լալով ասաց իւր հրեշտակին, Զիս պահեցէ՛ք այսոց չարեաց, որ չի հետնամ իմ Աստուծուն:

Թլկուրանցու այս խրատական տաղը հաւատաւոր մարդու հոգու արձագանքն է՝ փրկութեան ու յոյսի աղերսանքն առ Աստուած, որում նկատելի է նարեկացու եւ Ֆրիկի տիրական ազգեցութիւնը:

ՎԱՆՈՅ ԵՂԻՍ.ԶԱՐԵԱՆ